# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան Բաղրամյան 26, Հեռ.(0252)2-43-93**
**կայք՝ www.aparan.am էլ.փոստ՝** aparaniqaxaqapetaran@gmail.com


**<<ԱՆԴՐԱ>> ՍՊԸ –ին**
**ք. Երևան Նոր Արեշ 20/63**
**ՀՎՀՀ՝05022788**
**էլ. հասցե՝andraelectrocars2023@mail.ru**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ
## Պայմանագիրը միակողմանիորեն լուծարելու մասին

**Հարգելի գործընկեր.**

Հայտնում եմ Ձեզ այն մասին <<ԱՆԴՐԱ>> ՍՊԸ –ի և Ապարանի համայնքապետարանի միջև 12.01.2024 թվականին կնքվել է միկրոավտոբուսի մատակարարման ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23-1 ծածկագրով պայմանագիր: Կնքված պայմանագրի 8.15 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքման միջոցով: 01.03.2024թվականին <<ԱՆԴՐԱ>> ՍՊԸ-ի և Ապարանի համայնքապետարանի միջև կնքվել է համաձայնագիր, որով ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23-1 ծածկագրով պայմանագիրը մտել է ուժի մեջ և ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 20/քսան/ օրացուցային օր,սակայն մինչ 11.04.2024թվականը ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23-1 ծածկագրով պայմանագրով նախատեսված միկրոավտոբուսը չի մատակարարվել և պատվիրատուի ղեկավարը հիմք ընդունելով ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23-1 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերության և 2.1.7 կետերի պահանջները 11.04.2024թվականին ընդունել է որոշում միակողմանի լուծարելու <<ԱՆԴՐԱ>> ՍՊԸ –ի և Ապարանի համայնքապետարանի միջև 12.01.2024 թվականին կնքված միկրոավտոբուսի մատակարարման ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23-1 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ Ձեզ,որ համաձայն պայմանագրի 8.11 կետի ստանձնած արտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշված հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա) ենթակետի կազմակերպությունը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,եթե

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Միաժամանակ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վերում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված

որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից առաջարկում եմ համաձայն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-108/23 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.15 կետի մինչև <<ԱՆԴՐԱ>> ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի որոշումը լիազորված մարմնին ներկայացվելու վերջնաժամկետը՝ տասն օրվա ընթացքում, վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները, այն է պայմանագրի ապահովում ՝ 2 500 000/երկու միլիոն հինգը հարյուր հազար/ՀՀ դրամ, որակավորման ապահովում՝ 3 750 000/երեք միլիոն յոթը հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության գործառնական վարչությունում Ապարանի համայնքապետարանի բացված 900452101158 հաշվեհամարին՝ նշելով նպատակը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառվելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝

գնումների համակարգող Հայկ Հովսեփյան

ՀԵՌ՝ +37494231893